Տպագրված է ընդհամենը 4 օրինակ
Օրինակ 1

Հաստատված է

<<ՀԱՅՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>>
Գիտական հասարակական
Կազմակերպության կանոնադրության
Փոփոխությունները և լրացումները
<<.....>>-ը .......................2012թ.
Ընդհանուր ժողովի կողմից

Ակադեմիայի Պրեզիդենտ
Գ.Բրուտյան

.......................................................

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձնաց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից

գրանցման թիվ____________________
Վկայական____________________
Հարկ վճարողի հաշվառման համար__
_________________________
պետական ռեգիստրի ղեկավար
Ա.Գևորգյան

....................................................

# <<ՀԱՅՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>>
# Գիտական հասարակական կազմակերպություն

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

Երևան-2012թ.

1. <<Հայոց փիլիսոփայական ակադեմիա>> գիտական հասարակական կազմակերպության կանոնադրության (այսուհետ կանոնադրություն) 2-րդ գլխի վերանգիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ>>:

2. Կանոնադրության 2-րդ գլուխը լրացնել 2.1[1] կետով հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի գործունեության սկզբունքներն են՝ ա/ օրինականությունը, բ/ հրապարակայնությունը, գ/ անդամության կամավորությունը, դ/ անդամների իրավահավասարությունը, ե/ ինքնակառավարումը, զ/ ղեկավարման կոլեգիալությունը: Ակադեմիան ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակներն ու ձևերը: Ակադեմիան ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:>>:

3. Կանոնադրության 2.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիան կարող է շնորհել պատվավոր դոկտորի (Honoris causa) և պատվավոր պրոֆեսորի աստիճան Ակադեմիայի Պրիզիդենտի առաջարկով Ակադեմիայի Նախագահության որոշմամբ, Նախագահության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:>>:

4. Կանոնադրության 3.10.7 կետը ճանաչել ուժը կորցրած:

5. Կանոնադրության 3.11.3 կետից հետո ավելացնել 3.11.4 կետ հետևյալ խմբագրությամբ <<կատարել Նախագահության կողմից սահմանված ամսեկան պարտադիր անդամավճարները>>:

6. Կանոնադրության 3.12. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի անդամությունից դուրս գալը կատարվում է անդամի գրավոր դիմումի հիման վրա, իսկ Ակադեմիայի անդամությունից հեռացումը կատարվում է Ակադեմիայի նախագահության որոշմամբ՝ կանոնադրական դրույթների խախտման համար: Ակադեմիայի անդամությունը դադարում է Ակադեմիայի Նախագահության կողմից սահմանված չափով և ժամկետներում անդամավճարները չվճարելու դեպքում:>>:

7. Կանոնադրության 4.10.5 կետից հետո ավելացնել 4.10.6 կետ հետևյալ խմբագրությամբ <<սահմանում է անդամավճարների չափը, դրանց վճարման կարգը և չվճարման հետևանքները:>>:

8. Կանոնադրության 4.10.6 կետից հետո ավելացնել 4.10.7 կետ հետևյալ խմբագրությամբ <<Ընտրում է Ակադեմիայի փոխպրիզիդենտ (ներ):>>:

9. Կանոնադրության 4.11.7 կետից հետո ավելացնել 4.12 կետ հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի փախպրիզիդենտը (ներ)՝>>:

10. Կանոնադրության 4.12 կետից հետո ավելացնել 4.12.1 կետ հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի Պրիզիդենտի հանձնարարությամբ ապահովում է (են) Ակադեմիայի գործունեության առանձին ուղղությունների բնականոն ընթացքը,>>:

11. Կանոնադրության 4.12.1 կետից հետո ավելացնել 4.12.2 կետ հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի Պրիզիդենտի բացակայության ժամանակաշրջանում փոխարինում է Ակադեմիայի Պրիզիդենտին՝ իրականացնելով վերջինիս լիազորությունները,>>:

12. Կանոնադրության 4.12.2 կետից հետո ավելացնել 4.12.3 կետ հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի երկու կամ ավելի փոխպրիզիդենտների առկայության դեպքում սույն կանոնադրության 4.12.2 կետում նշված փոխարինման հարցը որոշում է Ակադեմիայի Պրիզիդենտը:>>:

13. Կանոնադրության 5.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ <<Ակադեմիայի գույքը գոյանում է անդամների անդամավճարներից, նվիրատվություններից, հասարակական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված նմանատիպ գործունեությունից և եկամուտներից:>>: